Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՁԲԱՆԿ-28/24.10.18-ԱՄ ծածկագրով գնման բաց մրցույթի

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ հայտարարում է բաց մրցույթ ձմեռային բանվորական արտահագուստ գնելու համար.

1. բաճկոն – 280 հատ,
2. կոստյում - 110 լրակազմ,
3. կոշիկ բանվորական – 360 զույգ:

Մատակարարման ժամկետ է սահմանվում 2018թ. դեկտեմբերի 01-ից մինչև 2019թ. փետրվարի 01-ը, առանձին խմբաքանակներով:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հայտերը ներկայացնել հայերեն կամ ռուսերեն, մինչև 15.11.2018թ. ժամը15^{00}, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

Հայտերի բացումը տեղի կունենա 15.11.2018թ. ժամը 15^{30}-ին, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում:

Մրցույթի պատվիրատուն և ֆինանսավորողը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն է:

Մրցույթի հաղթողի ընտրությունը կկատարվի գնային գնահատման սկզբունքով:

Մրցույթի հրավերի և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ.փոստ՝ info@raztes.am :

Անհրաժեշտության դեպքում մրցույթի պայմանների, արտահագուսի տեսքի և չափսերի, կտորի որակի, բանվորական կոշիկի չափսերի, ապրանքի մատակարարման պայմանների և այլ հարցերի մասին դիմել Ընկերության ԳՏՏ-գլխավոր ճարտարագետ, գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյանին, բջջ.հեռ (093) 93-22-33:

ՀՐԱՎԵՐ

(Կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն)

1. Սույն հրավերը տրամադրվում է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2018թ. հոկտոմբերի 26-ին տեղեկագրում հրապարակված ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՁԲԱՆԿ-28/24.10.18-ԱՄ ծածկագրով գնման բաց մրցույթի հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը՝ ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՁԲԱՆԿ-28/24.10.18-ԱՄ:

3. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30 հոդվածի համաձայն:

4. Մասնակցի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատումը կկատարվի ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշման 59-րդ կետի պահանջներին համապատասխան, իսկ մասնակցի կողմից հայտարարություն չներկայացնելու դեպքում՝ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածին համապատասխան:

5. Գնման առարկայի բնութագիրը՝

1. Ձմեռային բանվորական արտահագուստ՝ բաճկոն – 280 հատ:
2. Ձմեռային բանվորական արտահագուստ՝ կոստյում - 110 լրակազմ:
3. Բանվորական կոշիկ – 360 զույգ:

- Ապրանքների քանակները ըստ չափսերի գրանցված են համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածներում (կցվում են):
- Բաճկոնի, կոստյումի և կոշիկի արտաքին տեսքն ու ձևը պետք է համապատասխանեն Պատվիրատուի ներկայացրած նմուշներին, որոնց կարելի է ծանոթանալ «ՀրազՋԷԿ» ԲԲ Ընկերությունում:
- Արտահագուստի կտորի ընտրված գույնը պետք է լինի սև կամ մուգ կապույտ:
- Արտահագուստի կտորի տեսակը պետք է համապատասխանի Պատվիրատուի ներկայացրած նմուշին, որին կարելի է ծանոթանալ «ՀրազՋԷԿ» ԲԲ Ընկերությունում:
- Բաճկոնի տաքացնող մասը պետք է լինի պատրաստված սինտիպոն նյութից:
- Բաճկոնի և կոստյումի ձախ կողմում պետք է ամրացված լինի «ՀրազՋԷԿ» ԲԲԸ տարբերանշանը (լոգոն):

6. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

7. Պայմանագրի նախագիծը տրամադրվում է մասնակցի գրավոր պահանջով:

8. Մրցույթն իրականցվում է մեկ փուլով, մատակարարումը՝ խմբաքանակներով, ըստ Կողմերի համաձայնեցված ժամանակացույցի և հայտարարված ժամկետներում՝ 01.12.2018թ. մինչև 01.02.2019թ.:

9. Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը: Գնային առաջարկը ներկայացնել մրցույթով հայտարարված երեք ապրանքների համար առանձին-առանձին:

10. Հայտով ներկայացված առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը «ՀրազՋԷԿ» -ի տարածք:

11. Հայտի և պայմանագրի ապահովումն իրականացվում է Գնումների մասին օրենքի 32 և 35 հոդվածների համաձայն:

12. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ փաստաթղթային ձևով, մեկ բնօրինակ, հայերեն կամ ռուսերեն, մինչև 15.11.2018թ. ժամը15^{00}, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

13.Մրցույթին առնչվող հարցերով դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, գնահատող հանձնաժողովի քարտուղար Սոֆյա Մարգարյանին, հեռ. (223) 6-07-12, www.raztes.am:

14. Հայտերը կբացվեն 2018թ. նոյեմբերի 15-ին ժամը 15.30-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության:

15. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման դրույթներով:

16. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

17. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը սահմանված է գնումների մասին օրենքի 46 և 50 հոդվածներով:

18. Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է:

19. Սույն գնման հայտի առնչությամբ պատվիրատուն այլ տեղեկատվություն չունի:

ԳՏՏ-Գլխավոր ճարտարագետ,
Գնումների հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյան